2022, sp1, 80-97 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2022.sp1.080

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ. ՄՆՈՒՑԵԼՈՎ ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱԿԱԱՄԵՐԻԿԱՆԻԶՄԸ*

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Թուրքիայի արտաքին քաղաքականության փոխակերպումներում միջազգային համակարգայինից բացի էական նշանակություն ունեն նաև ներպետական մակարդակի փոփոխականներն ու սոցիալ-քաղաքական գործընթացները: Սույն հոդվածում թուրք-ամերիկյան արդի հարաբերություններում աննախադեպ լարվածությունը քննարկվում է թուրքական սոցիալ-քաղաքական գործընթացների համատեքստում:

Թուրքիայի արտաքին քաղաքականության անվտանգայնացման ընդհանուր միտումների շրջանակում հակաամերիկանիզմն ու հակաարևմտականությունը վերջին տասնամյակում հատկապես էական աճ են գրանցել, ինչը իշխող ԱԶԿ-ի դոմինանտ խոսույթի արդյունքն է: Մի կողմից հակաամերիկանիզմը և ԱՄՆ-ի իմիջի դեմոնիզացումը Էրդողանի համար կարևոր գործիք է երկրում պահպանողական, ազգայնական հանրային մոբիլիզացիա ապահովելու գործում: Մյուս կողմից, նա փորձում է միջազգային համակարգում Թուրքիայի իմիջը կերտել որպես իսլամական աշխարհում Արևմտյան հեգեմոնիային ընդդիմացող «վճռական տերություն»:

Բանալի բառեր – *Թուրք-ամերիկյան հարաբերություններ, «Արդարություն և զարգացում» կուսակցություն, Էրդողան, ռազմական հեղաշրջման փորձ, հակաամերիկանիզմ*

Ներածություն

Թուրք-ամերիկյան հարաբերություններն աննախադեպ լարված են: Թեև երկկողմ հարաբերությունների պատմության համար նորություն չեն փոխադարձ անվստահության ու լարվածության միտումները, սակայն դրանք եղել են իրավիճակային: Նույնիսկ Սառը պատերազմի շրջանում այդ երկու երկրները երկկողմ հարաբերություններում ունեցել են ճգնաժամային իրավիճակներ, որոնք, սակայն, կարճատև բնույթ են ունեցել և ռազմավարական նշանակության խզումներ չեն առաջացրել: Արդի հարաբերություններում առկա լարվածությունը որակապես

* Սույն [հոդվածը/հրատարակությունը] ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության դրամաշնորհի շրջանակում: Այստեղ արտահայտված են հեղինակ(ներ)ի դիրքորոշումները, որոնց համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշումներին պարտադիր չէ:

This [article/publication] was funded by a grant from the United States Department of State. The opinions, findings and conclusions stated herein are those of the author[s] and do not necessarily reflect those of the United States Department of State.

տարբերվում է, քանի որ այն կրում է ինչպես միջազգային համակարգի, այնպես էլ թուրքական սոցիալ-քաղաքական, գաղափարախոսական ու ինքնության փոխակերպումների ազդեցությունը: 2011թ. ընտրություններում իշխող կուսակցության հաղթանակը, անձնիշխանության ու ավտորիտարիզմի խորացումը, 2013 թ. Գեզիի դեպքերը, Գյուլեն-Էրդողան հակամարտությունը և հատկապես 2016 թ. հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձը, Սիրիայի հյուսիսում քրդական ուժերին աջակցությունն ուժգնացրին հակաամերիկյան տրամադրությունները, Արևմուտքի նկատմամբ անվստահությունը և թուրք-ամերիկյան լարվածությունը: Վստահորեն կարելի է արձանագրել, որ հեղաշրջման փորձից հետո ամերիկա-թուրքական հարաբերությունները ամենավատթարն էին, որ որբևէ գրանցվել են տասնամյակներ ի վեր[1]:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների լարվածությունն ու վատթարացումը դիտարկվում են առավելապես հետսառըպատերազմյան շրջանում երկբևեռ աշխարհակարգի փլուզման, միջազգային համակարգի բազմաբևեռայնության անցնելու տրամաբանության ու գործոնների ներքո՝ հաճախ անտեսելով ներքին/ներպետական, հասարակական-քաղաքական գործոնների կարևորությունն ու ազդեցությունն այդ հարաբերությունների վրա:

Թուրքիայի արտաքին քաղաքականության փոխակերպումների վրա կարևոր է ներքաղաքական, ներպետական գործընթացների նշանակությունը, քանի որ ավտորիտար կառավարման համակարգերում սովորաբար ներքին գործընթացների տրամաբանությունն է հաճախ թելադրում պետության արտաքին ու անվտանգային քաղաքականությունը: Վերջին տարիներին ակնհայտ է Թուրքիայում ներքին և արտաքին քաղաքականության ուժեղ փոխկապակցվածությունը: Ուստի արտաքին քաղաքականության ոլորտում փոխակերպումներն ամբողջության մեջ դիտարկելու համար անհրաժեշտ է վեր հանել դրանց ներքին՝ ներպետական ու ներքաղաքական դետերմինանտները: Այս առումով թուրք-ամերիկյան հարաբերությունները և ընդհանրապես Արևմուտքի նկատմամբ թուրքական քաղաքականությունը բացառություն չեն: Այս հարաբերություններում առկա լարվածությունը, դրա հիմքերն առավել համակողմանի լուսաբանելու համար առաջարկում ենք դիտարկել Թուրքիայի ներքին՝ միավորային մակարդակի սոցիալ-քաղաքական իրողությունների ազդեցությունը:

Թուրքիայում սոցիալ-քաղաքական փոխակերպումների ազդեցությունը երկկողմ հարաբերությունների վրա

Թուրքիայի արտաքին քաղաքականության փոխակերպումների և մասնավորապես Թուրքիա-Արևմուտք, Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների վրա, բացի միջազգային համակարգի ազդեցությունից, կարևոր

[1] Տե՛ս **Aslı Aydıntaşbaş, Kemal Kirişci**, The United States and Turkey, Friends, Enemies, or Only Interests? The Center on the United States and Europe at Brookings, Turkey project policy paper, Number 12, April 2017, էջ 2:

է ներքաղաքական, ներպետական գործընթացների նշանակությունը: Սովորաբար ավտորիտար կառավարման համակարգերում ներքին գործընթացների ազդեցությունը պետության արտաքին ու անվտանգային քաղաքականության վրա դառնում է որոշիչ, քանի որ իշխանությունը պահպանելու և հարատևելու գերխնդրի իրագործման նպատակով պոպուլիզմը, ազդեցիկ անհատի գործոնով պայմանավորված որոշումների կայացման մեխանիզմը, պետության մեջ հակակշիռների ու փոխզսպման մեխանիզմի թուլացումը լրջորեն ազդում և պայմանավորում են պետության արտաքին քաղաքականության նախապատվությունները: Այս համատեքստում ակնհայտ է Թուրքիայում ներքին և արտաքին քաղաքականության ուժեղ փոխկապակցվածությունը:

2002 թ. գալով իշխանության՝ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (այսուհետ՝ ԱԶԿ) դիրքավորվեց որպես արևմտամետ-բարեփոխական կուսակցություն, որը Թուրքիայի զարգացման հեռանկարը տեսնում էր արևմտյան լիբերալ համակարգին ինտեգրվելու և երկրում լայնածավալ բարեփոխումներ իրականացնելու մեջ: Մյուս կողմից, նոր սերնդի բարեփոխական-իսլամական քաղաքական ուժի բեմելը տեղավորվում էր իսլամական աշխարհում և հատկապես մերձավոր Արևելքում «տրանսֆորմատիվ դիվանագիտության» Արևմուտքի ռազմավարության մեջ, որով ԱԶԿ-ն նաև արտաքին լեգիտիմություն էր ստանում[2]: Եվ իրականում ԱԶԿ-ի կառավարման առաջին շրջանը կարելի է համարել բարեփոխական փուլ, ինչը ուղեկցվում էր արտաքին քաղաքականության մեջ «արևմտակենտրոնությամբ՝ հատկապես ԵՄ-ի անդամակցության համատեքստում:

Սակայն կարճ ժամանակ անց այդ դոմինանտ հարացույցը սկսեց փոխվել: 2011 թ. խորհրդարանական ընտրություններից հետո ԱԶԿ-ի և դրա առաջնորդի քաղաքական վարքագիծը սկսեց տրամագծորեն փոխվել: Շատ մասնագետներ այդ փոփոխությունն ու շրջադարձը բացատրում են հիմնականում արտաքին ու միջազգային գործընթացներով: Սակայն դրանում առանցքային դարձան ներպետական մի շարք իրողություններ: Նախ, 2011 թ. ընտրությունների արդյունքները ԱԶԿ-ին ոչ միայն հաղթանակ ապահովեցին, այլ նաև տվեցին հետագա քաղաքական գործընթացներում գերինքնավստահություն՝ պետական-քաղաքական համակարգի վերջնական կլանումը համարելով որպես կայացող իրողություն: ԱԶԿ-ին արդեն հաջողվել էր ներպետական համակարգի այնպիսի վերափոխումներ իրականացնել, որոնք ապահովում էին այդ ուժի անվարան ու անկաշկանդ հաղթարշավը: Չեզոքացվել էր իր կենսունակության համար վտանգ ներկայացնող թիվ մեկ ախոյանը՝ քեմալական կուռ զինվորականության ներքին ու արտաքին

[2] Տե՛ս **Ilhan Uzgel**, Turkey's Double Movement: Islamists, Neoliberalism and Foreign Policy, (in Turkey's New State in the Making: Transformations in Legality, Economy and Coercion, Ed. P. Bedirhanoğlu, Ç. Dölek, F. Hülagü and Ö. Kaygusuz, London: Zed Books, 2020, էջ 67-68:

քաղաքական դերակատարությունը[3]: Սա չափազանց լուրջ հաղթաթուղթ էր Էրդողանի համար: Հիմնական զսպող ու հակակշռող ազդեցիկ դերակատարը՝ հանձինս զինվորականության և ռազմաբյուրոկրատական համակարգի, այլևս մղված էր հասարակական-քաղաքական գործընթացների լուսանցք: Դրա հետ միասին ներպետական համակարգում ինստիտուցիոնալ-կառուցվածքային վերաձևումները լայն թափով շարունակվում էին, որոնք վերացնում էին երկրում հակակշռումների ու զսպումների մեխանիզմը, ինչը կարող էր ԱԶԿ-ի ներքին ու արտաքին հետագա քաղաքականության համար կաղապարող հանգամանք լինել: Թուրքիան սկսեց հետքայլ կատարել նախկին չափավոր լիբերալ-ազատական օրակարգից՝ ընկղմվելով ավտորիտարիզմի ու անձնիշխանության հորձանուտը: ԱԶԿ-ում և քաղաքական էլիտայում խախտվեց լիբերալ-ազատականներ և իսլամիստներ-ազգայնականներ հավասարակշռությունը՝ հօգուտ վերջիններիի, ինչի ինստիտուցիոնալ դրսևորումը ԱԶԿ-ի և «Ազգայնական շարժում» ազգայնամոլական կուսակցության դաշինքն էր, որն ամբողջացրեց իսլամական ազգայնականության դոմինանտ հարացույցը[4]: Ֆ. Ռոբինսի խոսքերով՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության սահմանման ու իրականացման հարցում գաղափարախոսությունն այնքան կարևոր է, որքան աշխարհաքաղաքականությունը: Գաղափարախոսական տարբերությունները առանցքային են շահերի ու սպառնալիքների ընկալման ու ըստ այդմ՝ քաղաքականության իրականացման հարցում[5]: Թուրքիայի ժամանակակից արտաքին քաղաքականության և մասնավորապես Արևմուտքի հետ հարաբերությունների հարցում գաղափարախոսական ու ինքնության գործոններից բխող նախապատվությունները առանցքային նշանակություն են ստացել: Քաղաքական ավտորիտար գործընթացներին զուգահեռ ակտիվանում էր ԱԶԿ-ի իրական ինքնությունից բխող իսլամական ինքնության ու գաղափարախոսության օրակարգի պարտադրումը: Իսկ դրա համար նախ պետք էր վերաձևել պետությունն ու դրա ինքնությունը, ինչը և իշխանության գալուց հետո իսլամականների նոր սերունդը ժողովրդավարության ու բարեփոխումների քողի տակ ճկուն կերպով դա իրականացրեց՝ իր շահերի համար գործիքայնացնելով Արևմուտքի պահանջներն ու ԵՄ-ի լծակները[6]: ԱԶԿ-ն լավագույնս օգտագործեց ԵՄ-ին անդամակցության համար Թուրքիայի առջև դրված նախապայմանները և ժողովրդավարացման քողի տակ իրականացված քաղաքական բարեփոխումներով հասավ զինվորականության քաղաքական դերակատարության ու ինստիտուցիոնալաց-

---

[3] Տե՛ս **Müge Aknür**, Civil-Military Relations During the AK Party Era: Major Developments and Challenges, Insight Turkey, Vol. 15, No. 4, 2013, էջ 142-143:

[4] Տե՛ս **Jenny White**, Muslim Nationalism and the New Turks, New Jersey, Princeton University Press, 2013.

[5] Տե՛ս **Mark Haas**, The Clash of Ideologies: Middle Eastern Politics and American Security (New-York: Oxford University Press, 2012), էջ 165:

[6] Տե՛ս **Ilhan Uzgel**, նշվ. աշխ., էջ 69:

ված իշխանության աստիճանական չեզոքացմանը՝ ապալեգիտիմացնելով բանակի՝ քաղաքականությանը միջամտելու հնարավորությունները[7]: Զինվորականության դերի թուլացումը հնարավորություն տվեց ԱԶԿ-ին երկրում հաստատելու ավտորիտար իր մենիշխանությունը և առաջ մղելու իր ինքնությունից բխող ներքին ու արտաքին քաղաքականության իսլամական օրակարգը՝ հասարակական-քաղաքական կյանքի վերափոխման մեջ առանցքային տեղ տալով նեո-օսմանյան ու իսլամական դիսկուրսին[8]: Էրդողանական ճկուն «թաքիյյա»-ն[9] լավագույնս ծառայեց իր անձնիշխանական մղումներին: Ազատվելով ներպետական համակարգում առկա խոչընդոտներից ու կապանքներից՝ Էրդողանն իր արժեքներից ու ինքնությունից բխող նախապատվությունները համարձակորեն բերեց արտաքին քաղաքականության ոլորտ: Քեմալիզմի գաղափարախոսությամբ պայմանավորված՝ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը պետության ու հասարակության արևմտականացմանը միտված ներքին քաղաքականության շարունակությունն էր, և աշխարհիկ էլիտաները արտաքին քաղաքականությունը կառուցում էին քեմալական հեղափոխությանը նպաստելու և չվնասելու պրիզմայով[10]: Այդպիսով, քեմալիզմի նպատակը՝ որպես իդեալ, ձևավորում էր Թուրքիայի արտաքին քաղաքականության կողմնորոշումը և արտաքին քաղաքականության գաղափարական կողմը[11]: Հ. Յավուզի բնորոշմամբ՝ արտաքին հարաբերությունները զտվում էին աշխարհիկ էլիտայի (այդ թվում՝ զինվորականության) ինքնավերագրված արևմտյան ինքնության պրիզմայով, ինչը թուրքական ազգային շահի ուրվագծման հիմքն էր[12]: Ուստի Թուրքիայի արտաքին քաղաքականության արևմտյան ուղղության դոմինանտությունը (ԱՄՆ, ՆԱՏՕ) բխում էր միավորային/ներպետական մակարդակում ինստիտուցիոնալացված սուբյեկտների ու գաղափարախոսության միասնությունից:

Իսլամամետ ԱԶԿ-ի քաղաքական իշխանության ամրապնդումը նշանակում էր պոստքեմալիզմի շրջանի սկիզբ և Թուրքիայի գաղափարախոսական խոսույթի, նախապատվությունների ու գործողությունների փոխակերպում, քանի որ պետության ինքնության և արտաքին քաղաքականության փոփոխությունը մեծ մասամբ կապված է

---

[7] Տե՛ս **Koray Caliskan**, Explaining the end of military tutelary regime and the July 15 coup attempt in Turkey, Journal of Cultural Economy, Vol. 10, No.1. 2017, էջ 105:

[8] Տե՛ս **Burak Bilgehan Özpek & Nebahat Tanriverdi Yaşar**, Populism and foreign policy in Turkey under the AKP rule, Turkish Studies, Vol. 19, No. 2, 2018, էջ 203:

[9] «Թաքիյյա»-ն շիայական իսլամում վտանգի ու հետապնդման դեպքում սեփական իրական դավանանքը թաքցնելու, քողարկելու վարքագիծը լեգիտիմացնող երևույթն է:

[10] Տե՛ս **Hakan Yavuz**, Nostalgia for the Empire: The Politics of Neo-Ottomanism (New-York: Oxford University Press, 2020) էջ 49:

[11] Տե՛ս **Özlem Demirtaş-Bagdonas**, A poststructuralist approach to ideology and foreign policy: Kemalism in the foreign policy discourse (Budapest: Central European University, 2008) էջ 37:

[12] Տե՛ս **Hakan Yavuz**, "Turkish-Israeli Relations Through the Lens of the Turkish Identity Debate", Journal of Palestinian Studies 27, No. 1 (Autumn, 1997) էջ 23:

ԱԶԿ-ական իսլամական ինքնության հետ[13]: ԱԶԿ-ի կառավարության երկրորդ շրջանից իսլամիզմի վրա հիմնված գաղափարախոսությունը սկսեց ավելի ակնհայտ դրսևորվել՝ դառնալով հասարակական-քաղաքական օրակարգի կարևոր գործոն, իսկ ավելի ուշ՝ նաև արտաքին քաղաքականության գաղափարական բաղադրիչ:

2013 թ. Թուրքիայում տեղի ունեցած գործընթացները՝ «Մեծ կաշառք», «Գեզի այգու իրադարձությունները», հակագյուլենական արշավը և դրանցով պայմանավորված հետագա հասարակական-քաղաքական իրադարձությունները ԱԶԿ-ի իշխանության համար դարձան լրջագույն մարտահրավերներ՝ սեփական իշխանության հարատևության պահպանման և հետագա տեսլականի իրագործման առումով: Թուրքիայում սկսվեց ներքաղաքական կյանքի անվտանգայնացման (securitization) ժամանակաշրջան: Այս առումով հետագայում անկյունաքարային դարձան ներքաղաքական մի շարք զարգացումներ, որոնք կանխորոշեցին ոչ միայն Թուրքիայի պետական ու հասարակական-քաղաքական, այլև արտաքին քաղաքականության հետագա ուղեգծերը: Ավտորիտար միտումները և ներքաղաքական գործընթացներն արժանանում էին Արևմուտքի քննադատությանը, իսկ Էրդողանը դրանց հակադարձում էր հակաարևմտյան հռետորաբանությամբ: Բնական է, որ ազատական-ժողովրդավարական նախնական օրակարգից ու գործընթացներից տրամագծորեն հակառակ գործող իշխանության համար Արևմուտքը դառնալու էր, մեղմ ասած, հակադարձման ու հակադրման օբյեկտ: Արտաքին քաղաքականության մեջ սա նաև դրսևորվում էր միջազգային համակարգում Թուրքիայի՝ ինքնավերագրված հակաիմպերիալիստական դերակատարի դիրքավորմամբ՝ Թուրքիան ներկայացնելով որպես արևմտյան նեոիմպերիալիզմի գրոհների թիրախ: Պատահական չէ, որ Գեզիի իրադարձությունների համար Էրդողանը և իշխանությունները սկսեցին մեղադրանքների սլաքն ուղղել դեպի արտաքին ուժեր՝ ԱՄՆ և ԵՄ, և որակել այն որպես միջազգային դավադրություն Թուրքիայի դեմ[14]: Գեզիի դեպքերը և «Մեծ կաշառք» գործի հետաքննությունը էականորեն մեծացրին իշխանությունների համար գոյութենական սպառնալիքն ու իր դեմ հավանական հեղափոխության ու հեղաշրջման վախերը: Համոզված լինելով Արևմտյան և հատկապես ամերիկյան դավադրության հարցում՝ իշխանությունները ներգրավվեցին ներքին ու արտաքին հակասությունների ստեղծման օրակարգում, որոնք տեղավորվում էին դավադրապաշտական տեսությունների շրջանակում[15]: Երբ 2011 թ. հետո Էրդողանը հաղթող դուրս եկավ իր ներքին մրցակիցների դեմ պայքարում, ընդլայնեց իր պապուլիստա-

[13] Տե՛ս **Ali Dayıoğlu, Nur Köprülü**, "Turkey's new identity revisited and its Islamist reflections in North Cyprus", Southeast European and Black Sea Studies 19, No. 4, 2019:

[14] Erdogan Places Blame for Protests on International Conspiracy, https://www.al-monitor.com/originals/2013/06/erdogan-gezi-conspiracy-taksim-governance-authoritarian-akp.html

[15] Տե՛ս **Ihsan Yilmaz & Galib Bashirov**, The AKP after 15 years: emergence of Erdoganism in Turkey, Third World Quarterly, Vol. 39, No. 9, 2018, էջ 1821-22:

կան անտագոնիզմի շրջանակը՝ սլաքն ուղղելով արտաքին դերակատարներին հատկապես Գեզիի դեպքերից հետո, ինչն էլ ավելի ինտենսիվացավ 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո: Նա սկսեց բացահայտ մեղադրանքներ հնչեցնել Արևմուտքի հասցեին՝ նշելով «վերին ուղեղի» (թուրք.՝ *üst akıl*) մասին, որը ցանկանում է մասնատել, թուլացնել Թուրքիան: Դա Էրդողանի համար «ճկուն թշնամի» է, որը կանգնած է Թուրքիայի դեմ բոլոր դավադրությունների հետևում՝ սկսած Գեզիի իրադարձություններից[16]: «Մեծ կաշառք» գործի շրջանակներում ևս պաշտոնական ու մեդիա խոսույթը սլաքներն ուղղեց դեպի ԱՄՆ՝ մեղադրելով Թուրքիայի դեմ բացահայտ դավադրություններում: Ավելին, Էրդողանը Քրդստանի բանվորական կուսակցությունը, Ֆեթուլլահ Գյուլենին, «Իսլամական պետությունը» ներկայացրեց մի շղթայի մեջ, որն ուղղորդված է ընդդեմ Թուրքիայի Արևմուտքի ու հատկապես ԱՄՆ-ի կողմից: ԱՄՆ-ն ներկայացվում էր որպես Թուրքիայի դեմ բացահայտ դավադրություններ հրահրող հիմնական դերակատար[17]: Թեև դավադրապաշտական ընկալումները ներհատուկ են Մերձավոր Արևելքի քաղաքական մշակույթին, և Թուրքիայում էլ այն մշտապես կենսունակ է եղել, վերջին տասնամյակում դավադրապաշտական տեսություններն ու օքսիդենտալիզմը[18] բարձրացվել են վարչակարգի հիմնական քաղաքական խոսույթի ու ոճի մակարդակի[19]:

Թուրքիա-ԱՄՆ-ՆԱՏՕ հարաբերություններում մյուս լրջագույն բացասական շրջափուլն սկսվեց 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո երկարատև արտակարգ դրության ժամանակաշրջանում, երբ ամերիկյան պաշտոնյաները գտնում էին, որ Էրդողանը կառուցվածքային առումով վերափոխում է Թուրքիայի քաղաքական համակարգի աշխարհիկ և պրոարևմտյան գործընթացները՝ երկրում խորացնելով ավտորիտարիզմը: ԱՄՆ-ն Թուրքիան դիտարկում էր որպես օրեցօր դեպի բռնապետություն խորացող երկիր, փոխարենն Էրդողանը պատասխանում էր իր մարտավարությամբ՝ հանրությանը տրամադրելով ԱՄՆ-ի դեմ[20]:

Հիրավի, հուլիսի 15-ի ձախողված ռազմական հեղաշրջումը ա-

---

[16] Տե՛ս **Erdem Aytac, Ezgi Elci**, Populism in Turkey, in Populism Around the World: A Comparative Perspective, ed. Daniel Stockemer, Springer 2018, էջ 99:

[17] Տե՛ս **Mehmet Ümit Necef**, Conspiracy theories and Occidentalism as an essential part of Turkish political culture, https://www.sdu.dk//media/files/om_sdu/centre/c_mellemoest/videncenter/artikler/2017/necef+article+december+17.pd, էջ 3-4:

[18] «Օքսիդենտալիզմը» պատկերում, բնորոշում է Արևմտյան աշխարհը որպես բացասական կարծրատիպերի ամբողջություն, որպես պատասխան ու հակադրում արևմտյան «Օրիենտալիզմին»:

[19] Տե՛ս **Mehmet Ümit Necef**, Conspiracy theories and Occidentalism as an essential part of Turkish political culture, Center for Mellemostudier, December 2017, https://www.sdu.dk/da/forskning/c_mellemoeststudier/forskning/publications/-/media/cda7596f1d95476d9becaa458e10da35.ashx

[20] Տե՛ս **Kamal A. Beyoghlow**, Turkey and the United States on the brink: implications for NATO and the US-Turkish strategic and military partnership, U.S. Army War College Press, January 2020, էջ 27-29:

ռանցքային նշանակություն ունեցավ էրդողանական «Նոր Թուրքիայի» կերտման, գաղափարախոսական ու արտաքին քաղաքական ուղեգծերի վերասահմանման հարցում: Արդեն իսկ անվտանգայնացված ու ահաբեկչական կառույց հռչակված գյուլենական շարժումը[21], որը իշխանական նարատիվի համաձայն նախաձեռնել ու իրականացրել էր ռազմական հեղաշրջման փորձը, ներկայացվում էր իբրև գործիք Արևմուտքի իմպերիալիստական ուժերի և հատկապես ԱՄՆ-ի ձեռքին, ուստի էրդողանական վարչակարգը «արտաքին դավադիրների» դեմ համազգային նոր դիմակայության ճակատ էր բացում: Էրդողանը շարունակաբար հայտարարում էր ազգային ազատագրական նոր պատերազմի մասին՝ ձախողված հեղաշրջման միֆաստեղծման գործում առանձնահատուկ ձևով ընդգծելով հակաարևմտականությունը[22]:

Ռազմական հեղաշրջման փորձն ու դրան հաջորդած գործընթացները լրջագույն ազդեցություն ունեցան Արևմուտքի և մասնավորապես ԱՄՆ-ի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա: Այդ գործընթացները կարելի է համարել ամերիկա-թուրքական աննախադեպ լարվածության ու հակաամերիկանիզմի նոր փուլ, երբ ԱՄՆ-ն մեդիա և քաղաքական խոսույթում ներկայացվում էր որպես «բացահայտ կամ քողարկված թշնամի»[23] :

Թուրքիայում մեկնարկած պետական ու քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ-կառուցվածքային վերափոխումները կազմաքանդեցին և գլխովին վերացրին երկրի՝ նախկինում բավականին կուռ քաղաքական զսպման և հակակշռման ներպետական համակարգը: Ռազմական, պետական, օրենսդրական դաշտի վերափոխումների արդյունքում, որի ամբողջացումը տրվեց 2017 թ. սահմանադրական հանրաքվեով, երկրում հաստատվեց Էրդողանի անվերահսկելի անձնիշխանությունը: Պետական համակարգի նման լայնածավալ վերաձևումը հանգեցրեց նաև արտաքին ու անվտանգային քաղաքականության որոշումների կայացման անձնակենտրոնության՝ Էրդողանի գլխավորությամբ[24]: Ներպետական այնպիսի ինստիտուտների դերակատարությունը, որոնք արտաքին քաղաքականության որոշումների կայացման ու իրականացման հարցում որոշիչ նշանակություն ունեին և մեծամասամբ համարվում էին Թուրքիայի աշխարհիկ-արևմտյան կուրսի

---

[21] Գյուլենական շարժումը 2016 թ. մայիսից Թուրքիայում հռչակվեց որպես ահաբեկչական կազմակերպություն (թուրք.՝ Fetullahçı Terör Örgütü-FETÖ).

[22] Տե՛ս **Ahmet Akkaya**, From Military Tutelage to Nowhere: on the Limitations of Civil-Military Dualism in Making Sense of the Rise of Authoritarianism in Turkey in the 2010s, in (Turkey's New State in the Making: Transformations in Legality, Economy and Coercion, Ed. P. Bedirhanoğlu, Ç. Dölek, F. Hülagü and Ö. Kaygusuz, London: Zed Books, 2020, էջ 195-197:

[23] Տե՛ս **Ibrahim Karagül**, "ABD Türkiye için düşman ülkedir. Bir gün, binlerce insan İncirlik'i de kuşatır..,", Yeni Safak, Ocak 26, 2018, https://www.yenisafak.com/yazarlar/ibrahim-karagul/abd-turkiye-icin-dusman-ulkedir-bir-gun-binlerce-insan-incirliki-de-kusatir-2043139.

[24] Տե՛ս **Siri Neset**, Turkish foreign policy: structures and decision-making processes, CMI Report, 2019, https://www.cmi.no/publications/6854-turkish-foreign-policy-structures-and-decision-making-processes:

երաշխավոր, այլևս մարգինալացվել էր՝ հանձինս զինվորականության և արտաքին գործերի նախարարության[25]: Ինստիտուցիոնալ կազմակերպակառուցվածք և բյուրոկրատական էլիտա՝ խավ ունեցող ռազմաբյուրոկրատական ավանդական համակարգը, ԱԳՆ-ի ու ռազմական վերնախավի միասնականությամբ, ձևավորում էր իր արժեհամակարգին բնորոշ արտաքին քաղաքականություն ու գաղափարախոսություն: Այն ենթադրում էր Թուրքիայի երկարաժամկետ անզիջում հավատարմությունը արևմտականացման քեմալական աշխարհիկ իդեալներին ու սկզբունքներին[26]: Այդ համակարգի կազմաքանդումը կարևոր առաջնահերթություն էր Էրդողանի՝ իր հավակնությունների իրականացման առումով:

2013 թ. ինտենսիվորեն սկսած և 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո լայնածավալ բնույթ ստացած պետական համակարգում իրականացված համընդհանուր զտումները չէին կարող չանդրադառնալ արտաքին ու անվտանգային քաղաքականության հետագա ուղեգծի վրա: Հատկապես անվտանգության մարմիններում ու բանակում ազգայնական-պահպանողականների (ինչպես նաև եվրասիականների) դերի, ԱԳՆ-ում հակագյուլենական որսից հետո ԱՇԿ-ականների և եվրասիականների թվի ու ազդեցության մեծացումը անխուսափելիորեն հանգեցնելու էր արտաքին և անվտանգային քաղաքականության կերպափոխման[27]:

Երկրում համընդհանուր բռնաճնշումներն ու ձերբակալությունները, ազատ մամուլի ոչնչացումը, հակաժողովրդավարական մյուս գործընթացները խորացրին Թուրքիայի ու ԱՄՆ-ի, Թուրքիայի և ԵՄ-ի միջև բաժանարար գծերը:

Ռազմական հեղաշրջման փորձի պաշտոնական խոսույթն ու նարատիվն ուղղվեցին ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի դեմ: Թուրքիան դրանում պատասխանատու համարեց ԱՄՆ-ում բնակվող կրոնական գործիչ, իր նախկին դաշնակից Ֆեթուլլահ Գյուլենին, որի արտահանձնման շուրջ անարդյունք բանակցությունները դարձան թուրք-ամերիկյան լարվածության գագաթնակետի առանցքային գործոն: Հեղաշրջման փորձից անմիջապես հետո տարբեր պաշտոնյաներ սկսեցին դրա կազմակերպման մեջ բացահայտ և քողարկված մեղադրել ԱՄՆ-ին: Վարչապետ Բ. Յըլդըրըմը, ակնարկելով ԱՄՆ-ին, հայտարարեց, որ ցանկացած պետություն, որը կանգնած է Գյուլենի հետևում, կհամարվի Թուրքիայի հետ պատերազմող երկիր: Աշխատանքի հարցերով նախարար, Էրդողանի մտերիմ

---

[25] Տե՛ս **Լ. Հովսեփյան**, Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերագնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները, «Հայկական բանակ», 4 (98) 2018, էջ 34-39.

[26] Տե՛ս **Alper Kaliber & Esra Kaliber**, From De-Europeanisation to Anti-Western Populism: Turkish Foreign Policy in Flux, The International Spectator, The International Spectator, 2019, Vol. 54, No. 4, էջ 9:

[27] Տե՛ս **Stephen J. Flanagan, F. Stephen Larrabee**, **Anika Binnendijk, Katherine Costello, Shira Efron, James Hoobler, Magdalena Kirchner, Jeffrey Martini, Alireza Nader, Peter A. Wilson**, Turkey's Nationalist Course, Implications for the U.S.-Turkish Strategic Partnership and the U.S. Army, Santa Monica, RAND Corporation 2020, էջ 38-39:

Ս. Սոյլուն բացահայտ հայտարարեց, որ ռազմական հեղաշրջման հետևում կանգնած է ԱՄՆ-ն[28]: ԱՄՆ պետքարտուղար Ջ. Քերին թուրք պաշտոնյաների նմանատիպ հայտարարությունները որակեց թուրք-ամերիկյան հարաբերությունները «վնասող»[29]: 2021 թ.փետրվարին իր հարցազրույցում արդեն ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնող Սուլեյման Սոյլուն կրկին բացահայտ մեղադրանքներ հնչեցրեց ԱՄՆ-ի հասցեին՝ նշելով, որ Գյուլենը հեղաշրջման փորձն իրականացրել է ԱՄՆ-ի աջակցությամբ[30]: ԱՄՆ պետքարտուղարությունը հերքեց նման հայտարարությունը՝ նշելով, որ թուրք պաշտոնյաների նման հայտարարությունները անհիմն են և հակասում են Թուրքիայի՝ ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի հետ դաշնակցային ռազմավարական գործընկերության ոգուն[31]: Հեղաշրջման հարցում ամերիկյան հետքի մասին նարատիվը չափազանց ակտիվ տարածվում էր իշխանական մեդիայում, սոցցանցերում, փորձագիտական-վերլուծական հանրային քննարկումներում: Թուրք հանրության մեծ մասը ևս կիսում էր ԱՄՆ-ի մեղսակցության թեզը[32]:

Հեղաշրջման փորձից հետո Թուրքիայում զինվորականության նկատմամբ սկսած «վհուկների որսը» լուրջ ծավալների հասավ: Տարբեր աղբյուրներ փաստում են, որ ձերբակալված և բանակից հեռացված բարձրաստիճան զինվորականների մեջ մեծ է ՆԱՏՕ-ամետ կամ այսպես կոչված՝ «ատլանտիստ» զինվորականների թիվը[33]: ԱՄՆ-ն իր մտահոգությունը հայտնեց զինվորականների համընդհանուր ձերբակալությունների առնչությամբ, ինչը տարակուսանք ու դժկամություն առաջացրեց Անկարայում: ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության ղեկավարը և Ազգային հետախուզության տնօրենը նշեցին, որ ձերբակալված զինվորականների մեջ քիչ չեն ամերիկյան կողմի՝ ռազմական գերատեսչության հետ աշխատող գործընկեր սպաները: Նրանք նաև մտահոգություն էին հայտնել, որ անվտանգության համակարգի նման վերաձևումն ու թուրքական բանակում իրենց գործընկերների մաքրազտումները բացասական հետևանքներ են թողնելու ամերիկյան տարածաշրջանային քաղաքականության վրա: Ամերիկացի գեներալների այդ մտահոգությունները հեղաշրջման փորձի հետևում ԱՄՆ-ի

---

[28] Տե՛ս **Michael Georgy, Mert Ozkan**, Conspiracy theories flourish after Turkey's failed coup, Reuters, July 27, 2016, https://www.reuters.com/article/us-turkey-security-conspiracy-idUSKCN1071XZ

[29] ABD'den Türkiye'ye darbe girişimi açıklamaları uyarısı, BBC News-Turkçe, 17 Temmuz, 2016, https://www.bbc.com/turkce/haberler-turkiye-36819160

[30] Տե՛ս **Nedim Şener**, '15 Temmuz'u FETÖ ABD ile yaptı', Hürriyet, Şubat 04, 2021, https://www.hurriyet.com.tr/yazarlar/nedim-sener/15-temmuzu-feto-abd-ile-yapti-41732285.

[31] ABD Dışişleri'nden Soylu'nun iddiasına yanıt: '15 Temmuz'da ABD'nin rolü olduğu iddiası gerçek dışı ve sorumsuzca', BBC News-Turkçe, 05 Şubat, 2021, https://www.bbc.com/turkce/haberler-dunya-55944373.

[32] Տե՛ս **Ayla Ganioglu**, Coup row haunts Turkish-US ties, Al-Monitor, February 16, 2021, https://www.al-monitor.com/originals/2021/02/turkey-majority-believes-us-is-involved-in-2016-coup-attempt.html

[33] Barkey says pro-NATO generals purged, Turkey-Alliance relations could shift, Turkish Minute, February 6, 2017, https://www.turkishminute.com/2017/02/06/video-barkey-says-pro-nato-general-purged-turkish-nato-relations-will-shifted/

կանգնած լինելու մասին փաստարկների նոր ալիք բարձրացրին Թուրքիայում, որից անմասն չմնաց նաև Էրդողանը՝ ամերիկացի այդ գեներալներին մեղադրելով ապստամբ թուրք զինվորականներին աջակցելու և պաշտպանելու մեջ[34]:

Հեղաշրջման գործում ներգրավվածության մեղադրանքով ամերիկացի կաթոլիկ հոգևորական Է. Բրոնսոնի ձերբակալությունը Թուրքիայում էլ ավելի սրեց ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները, ինչը հանգեցրեց Թուրքիայի դեմ ամերիկյան պատժամիջոցների կիրառմանը: Բրոնսոնի ձերբակալությունն Անկարայի համար Գյուլենի արտահանձնման հարցում սակարկման լծակ ապահովելու փորձ էր, ինչն անարդյունք եղավ[35]: Թուրքական պետական «Հալքբանկ» բանկի դեմ 2018 թ. Նյու Յորքում սկսված հետաքննությունն ու ձերբակալությունները երկկողմ լարվածության ևս մեկ թնջուկ էին: Էրդողանը, սրելով հակաամերիկյան դիսկուրսը, այս անգամ էլ ԱՄՆ-ին մեղադրեց «քաղաքական հեղաշրջման փորձի» մեջ՝ հայտարարելով, որ ռազմական հեղաշրջման գործում ձախողվածներն այս անգամ էլ նոր տարբերակներ են փնտրում երկրում[36]:

Ներքաղաքական ու ներպետական գործընթացները Թուրքիայում սկսեցին լրջորեն պայմանավորել նաև արտաքին քաղաքականությունը, ինչն այս դեպքում առավել ակնհայտ է ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հարցում: Այս համատեքստում պակաս կարևոր հանգամանք չէր վերոնշյալ գործընթացների պատճառով ԱՄՆ-ի համար Թուրքիայի՝ նախկինում ունեցած գրավչության կորուստը:

Թուրքիայում խորացող ավտորիտար համակարգը արժեզրկեց «թուրքական մոդելը», որը խրախուսվում և աջակցություն էր ստանում ԱՄՆ-ի կողմից: Թուրքիայում կայացած ընտրական ժողովրդավարությունը, լիբերալ տնտեսությունն ու աշխարհիկ, չափավոր իսլամական մոդելը Մերձավոր Արևելքում ու Կենտրոնական Ասիայում ընդօրինակման արժանի նմուշաձև էին, որով կարևորվում էր նաև Թուրքիայի ռազմավարական նշանակությունն ԱՄՆ-ի համար: ԱՄՆ-ն զգալի խաղադրույք էր կատարել ինչպես 1990-ական թթ. Կենտրոնական Ասիայում «թուրքական մոդելի» խրախուսման[37], այնպես էլ ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո արաբական ու իսլամական աշխարհում որպես մոդեռն պետական կառուցակարգի և իսլամի ու ժողովրդավարության զուգակցման օրինակ կիրառելու ուղղությամբ, երբ ամերիկյան վարչակարգի համար Մեծ Մերձավոր Արևելքում ժողովրդավա-

---

[34] Top US generals' coup remarks hamper relations with Turkey, TRT World, July 29, 2016 https://www.trtworld.com/mea/top-us-generals-coup-remarks-hamper-relations-with-turkey-153311

[35] Տե՛ս **Jen Kirby**, The US-Turkey trade spat, explained, Vox, August 15, 2018, https://www.vox.com/world/2018/8/15/17687928/turkey-united-states-tariffs-lira-andrew-brunson:

[36] Dorian Jones, Erdogan Accuses US of 'Political Coup Attempt', https://www.voanews.com/europe/erdogan-accuses-us-political-coup-attempt.

[37] Մանրամասն տե՛ս **Idris Bal**, The Turkish Model and the Turkic Republics, Perceptions. Journal of International Affairs, Vol. III, No. 3, September - November 1998:

բացումը հեռանկարային ռազմավարություն հռչակվեց[38]: Այն լուրջ «արժանիք» էր Թուրքիայի համար և մեծացնում էր նրա աշխարհաքաղաքական նշանակությունը ամերիկյան քաղաքականության համար: Էրդողանի հակաժողովրդավարական ու բռնապետական քաղաքականությունը ոչ միայն հարցականի տակ դրեց «թուրքական մոդելի» գրավչությունը ԱՄՆ-ի համար, այլև լուրջ հարված հասցրեց Սառը պատերազմից հետո ամերիկա-թուրքական փոխգործակցության առանցքային այդ նարատիվին[39]:

Թուրքիայում վերջին տասնամյակում ժողովրդավարական միտումների ու օրենքի գերակայության վերացումը, խորացող ավտորիտարիզմն ու անձնիշխանությունը ամերիկա-թուրքական հարաբերությունների բաժանարար կարևոր գործոններից են, երբ ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ կրկին կարևորվում է ժողովրդավարության ու արժեքային բաղադրիչի գործոնը: Որոշ մասնագետներ ամերիկա-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում կարևորում են Թուրքիայում ժողովրդավարական գործընթացներին անցում կատարելու հանգամանքը[40]: Սակայն միևնույն ժամանակ Էրդողանն ապացուցել է իր հանդուգն կեցվածքն արևմտյան քննադատությունների ու պատժամիջոցների նկատմամբ՝ դրանք անմիջապես տեղափոխելով Թուրքիայի դեմ «իմպերիալիստական հարձակումների ու թուրքական դիմադրության» գերակա պատմության շրջանակ: Միևնույն ժամանակ դա գործիքայնացվում է Էրդողանի կողմից ազգայնական հռետորաբանության ուժգնացման՝ ազգայնական հատվածի մոբիլիզացման ու հանրային աջակցության ապահովման նպատակով[41]: Մյուս կողմից նա փորձում է Թուրքիայի իմիջը միջազգային համակարգում կերտել որպես իսլամական աշխարհում Արևմտյան հեգեմոնիային ընդդիմացող վճռական տերության:

Զգտելով դառնալ ինքնաբավ և ընկղմվելով ավտորիտարիզմի մեջ՝ Թուրքիան քիչ է սկսում հաշվի նստել իր ավանդական դաշնակցի հետ, դառնում վերջինիս համար անկանխատեսելի և ինքնագլուխ:

Հակաարևմտականության և հակաամերիկանիզմի սնուցումը. շարունակականություն և փոփոխականություն

2011 թ. ընտրություններից հետո ԱԶԿ-ի իշխանության համախմբման, ավտորիտարիզմի միտումների ու իսլամական օրակարգի ա-

---

[38] Տե՛ս **Meliha Benli Altunisik**, The Turkish Model and Democratization in the Middle East, Arab Studies Quarterly, Vol. 27, No. 1-2, 2005, էջ 45-46:

[39] Տե՛ս **Aslı Aydıntaşbaş, Kemal Kirişci**, նշվ. աշխ., էջ 2:

[40] Տե՛ս **Sinan Ulgen**, Redefining the U.S.-Turkish Relationship, Carnegie Endowment for International Peace, Working paper, July 2021, https://carnegieendowment.org/files/Ulgen_US-Turkey_final.pdf:

[41] Տե՛ս **Max Hoffman,** Flashpoints in U.S.-Turkey Relations in 2021, Center for American Progress Report, January 2021, https://americanprogress.org/wp-content/uploads/2021/01/Flashpoints-In-USTurkey-Relations-1.pdf, էջ 11:

ռաջմղման շրջանակում սկսեցին սրվել հակաարևմտյան տրամադրություններն ու ակտիվանալ պաշտոնական հակաարևմտյան խոսույթը: Ամերիկա-թուրքական աննախադեպ լարվածության նոր փուլում ԱՄՆ-ն թուրքական մեդիա և քաղաքական դիսկուրսում ներկայացվում էր որպես թշնամի[42]: Հակաարևմտականությունն ու հակաամերիկանիզմը թեև այսօր աննախադեպ են, սակայն պետք է նշել, որ դրանք դրսևորվել են Թուրքիայի հանրապետության պատմության տարբեր ժամանակահատվածներում: Հակաարևմտականությունը սկսեց զարգանալ Օսմանյան կայսրության վերջին շրջանում, այն առավելապես բյուրեղացվեց և ինստիտուցիոնալացվեց կայսրության փլուզման և հանրապետության հռչակման տարիներին. թեև հակաարևմտականությունը այս կամ այն կերպ առկա էր պետական մտածողության մեջ, քեմալական գաղափարախոսությամբ պայմանավորված՝ արդիականացման ու արևմտականացման ուղեգիծը, կարելի է ասել, հաղթահարեց այդ բարդույթը: Ինչ վերաբերում է հակաամերիկանիզմին, այն սկսեց դրսևորվել 1960-ական թվականներին, իսկ ԱՄՆ-ն ու ՆԱՏՕ-ն դեռևս չէին նույնացվում Արևմուտքի մասին թուրքական ընկալումներում: Թուրք-ամերիկյան հարաբերություններում ներկայիս լարվածությունը թեև երկարատև է ու աննախադեպ, դա նորություն չէ երկկողմ հարաբերություններում: Տարբեր ժամանակաշրջաններում դրանք աչքի են ընկել ճգնաժամերով ու լարվածությամբ, որոնք, սակայն, ռազմավարական ու երկարատև չեն եղել: Սառը պատերազմի շրջանում երկկողմ լարվածության փուլերը վերածվել են ճգնաժամերի, որոնք պայմանավորված են եղել հիմնականում կիպրական խնդրով: Առաջին ճգնաժամը գրանցվեց 1964 թ., երբ ԱՄՆ նախագահ Լինդոն Ջոնսոնը Կիպրոսի դեմ հնարավոր թուրքական ագրեսիայի հարցում նախազգուշական նամակ հղեց Թուրքիայի վարչապետ Իսմեթ Ինոնյուին: Երկրորդ ճգնաժամն առաջացավ 1974 թ. թուրքական ուժերի կողմից Կիպրոսի անեքսիայի հետևանքով, երբ ԱՄՆ-ն մի քանի տարի տևողությամբ զենքի էմբարգո կիրառեց Թուրքիայի նկատմամբ, ինչը բացասական լուրջ հետք թողեց թուրքական հասարակական-քաղաքական ընկալումների վրա՝ ի հայտ բերելով «էմբարգոյի սինդրոմը»[43]: Թեև թուրք-ամերիկյան հարաբերություններում լարվածության ճգնաժամերը հաճախ դիտարկվում են կիպրական գործոնի համատեքստում, էական ազդեցություն է ունեցել և երկկողմ հարաբերությունների վրա իր հետքը թողել կարիբյան ճգնաժամի ժամանակ Թուրքիայում տեղակայված «Յուպիտեր» հրթիռների դուրսբերումը 1962 թ.: Երբ

[42] Տե՛ս **Ibrahim Karagül**, "ABD Türkiye için düşman ülkedir. Bir gün, binlerce insan İncirlik'i de kuşatır..,", Yeni Şafak, Ocak 26, 2018, https://www.yenisafak.com/yazarlar/ibrahim-karagul/abd-turkiye-icin-dusman-ulkedir-bir-gun-binlerce-insan-incirliki-de-kusatir-2043139:

[43] Տե՛ս **Լևոն Հովսեփյան**, Թուրքական արդի քաղաքական-անվտանգային խոսույթի երկու պարադիգմներ՝ Սևրի սինդրոմ և Ազգային ուխտ. խոսույթից քաղաքականություն, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն 3 (33): 2020, էջ 17-30:

ԱՄՆ-ն սկսեց տեղակայել այդ հրթիռները Թուրքիայում, դա թուրքական էլիտայի ու հասարակության շրջանում ազգայնական տրամադրությունների ու հպարտության ալիք բարձրացրեց, քանի որ վերահաստատվում էր Թուրքիայի կարևոր նշանակությունն Արևմուտքի համար և ամրապնդում անվտանգության ոլորտում ռազմավարական կապերը[44]: Երբ հրթիռների դուրսբերման գործարքը հայտնի դարձավ թուրքական հասարակությանը, ոչ միայն դա լուրջ հարված հասցրեց ամերիկացիների նկատմամբ թուրքական հասարակության մեջ վստահությանն ու հուսալի դաշնակցի իմիջին, այլև հիմք դրեց ԱՄՆ-ի նկատմամբ կասկածամտությանն ու անվստահությանը, որի թողած երկարատև ժառանգությունը շարունակում է իր ազդեցությունն ունենալ ներկայիս հարաբերություններում[45]: Օմեր Թաշփընարն իրավացիորեն նկատում է, որ թուրք-ամերիկյան հարաբերություններում այդ ճգնաժամերը գրանցվել են երկբևեռ աշխարհակարգի ու մրցակցության թելադրած կանխատեսելիության ու կայունության լայն համատեքստում[46], որտեղ Թուրքիան մանների մեծ հնարավորություն կամ այլընտրանք ուղղակի չուներ:

Հակաամերկանիզմի նոր ալիք գեներացվեց 2003 թ. իրաքյան ռազմագործողության ժամանակ և դրան հաջորդած շրջանում, երբ թուրքական խորհրդարանը մերժեց ամերիկյան ուժերին Իրաքի դեմ գործողության համար տարածք տրամադրել: Դա էականորեն մեծացրեց երկկողմ հարաբերություններում եղած անվստահությունն ու կասկածամտությունը, որը դրսևորվեց ինչպես պաշտոնական, քաղաքական, այնպես էլ հասարակական տիրույթներում:

Հակաամերիկանիզմը Թուրքիայում որոշ առումով 1960-ականներից սկսած դարձավ քաղաքական ու ռազմավարական մտածողության բաղադրիչ, որը ժամանակ առ ժամանակ օբյեկտիվ ու սուբյեկտիվ ներգործության արդյունքում դառնում է թրենդային: Հանրապետական շրջանի հակաամերիկանիզմը բխում էր որոշ չափով թուրքական ինքնիշխանությունը պահելու թուրքական մղումներից և առավելապես թուրքական ձախակողմյան գաղափարախոսական շրջանակներից[47]: Եթե առաջինը գեներացվում էր այս կամ այն չափով քաղաքական էլիտայի ու պետական մեքենայի կողմից, ապա երկրորդի դեպքում այն բխում էր հասարակական ձախակողմյան գաղափարականացված սեգմենտից:

Սառը պատերազմի շրջանում Թուրքիայում եղած հակաամերիկանիզմի և ներկայում եղածի միջև առկա են մեթոդաբանական որոշ

---

[44] Տե՛ս **Jennifer Schaffer**, The Turkish Missile Crisis: The Root of Anti-American Sentiment in Turkey, https://medium.com/meddah-a-u-s-turkey-storytelling-project/the-turkish-missile-crisis-the-root-of-anti-american-sentiment-in-turkey-6e7258e8975

[45] Տե՛ս նույն տեղը:

[46] Տե՛ս **Ömer Taşpınar**, The Anatomy of Anti-Americanism in Turkey, https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/06/taspinar20051116.pdf

[47] Տե՛ս **Nur Bilge Criss**, A Short History of Anti-Americanism and Terrorism: The Turkish Case, Journal of American History, Vol. 89, No. 2, September 2002, էջ 472:

տարբերություններ, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ։ Նախ՝ սառըպատերազմյան շրջանի թուրքական հակաամերիկանիզմն ուներ առավելապես «պետականակենտրոն» մոտեցում. սլաքն ուղղված էր ամերիկյան պետության՝ թուրքական պատկերացմամբ սխալ քաղաքականությանը։ Բացի այդ, երկբևեռ համակարգում Արևմտյան ճամբարում գտնվելը, թուրքական դոմինանտ պետական ինքնությունն ու արևմտականացումը սահմանափակում էին հակաամերիկանիզմի աճը, քանի որ արտաքին ու ներքին անվտանգային առումով կարող էին առաջանալ լրջագույն խնդիրներ, որոնց դիմագրավելու համար Թուրքիայի հնարավորությունները, մեղմ ասած, սահմանափակ էին։ Երկրում ձախակողմյան շարժումների ակտիվացումն ու քաղաքական իսլամի բեմելը լրջագույն մարտահրավեր էին թուրքական արևմտականացման քեմալական ծրագրի տեսանկյունից, ուստի նաև իշխանությունների համար հակաամերիկանիզմի լայն տարածումը զսպելու անհրաժեշտություն էր առաջանում։

Օմեր Թաշփընարը տարիներ առաջ կատարած իր ուսումնասիրության մեջ Թուրքիայում հակաամերիկանիզմը սահմանում էր որպես ամերիկյան քաղաքականության դեմ անհամաձայնություն և ոչ թե վրդովմունք կամ հակազդեցություն ամերիկացիների, նրանց արժեքների ու ժողովրդավարության դեմ[48]։ Սա առավելապես բնութագրական կարող է լինել սառըպատերազմական շրջանի համար, քանի որ Թուրքիան և ԱՄՆ-ն ոչ միայն անվտանգային մեկ բևեռում էին, այլև գտնվում էին քաղաքակրթական առումով հոմոգեն Արևմտյան աշխարհում։ Ըստ նրա՝ հակաամերիկանիզմի ծավալն ու շրջանակն աճել է նաև այն պատճառով, որ Վաշինգտոնի ու Անկարայի համար այլևս չկա «ընդհանուր թշնամի»[49], իսկ կողմերի համար թշնամիներն ու սպառնալիքները ոչ միայն տարբեր են, այլև որոշ դեպքերում մեկի թշնամին մյուսի դաշնակիցն է։

Ներկայումս Թուրքիայի հակաամերիկանիզմը տարբերվում է նախորդ նկարագրածից, քանի որ այժմյան էլիտան չի նույնացնում Թուրքիան և ԱՄՆ-ն որպես քաղաքակրթական մեկ արեալի մաս, իսլամական ինքնությունն ու Արևմուտքը արժեքային առումով ներկայացվում են որպես անտագոնիստական, դիտարկվում «մենք» և «օտարը» կաղապարում։ Բացի այդ, կարևոր հանգամանք է մեդիա և համացանցային տիրույթը, որով ինտենսիվորեն գեներացվում է թուրքական ժամանակակից հակաամերիկանիզմը[50], ինչը ևս սահմանափակող հանգամանք էր նախորդ տասնամյակներում։ Վերջին տարիներին հենց իշխանական մամուլն ու փորձագետներն են ինտենսիվորեն զարգացնում իշ-

[48] Տե՛ս **Ömer Taşpınar**, The Anatomy of Anti-Americanism in Turkey, https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/06/taspinar20051116.pdf:

[49] Տե՛ս նույն տեղը։

[50] Տե՛ս **Onat, Ismail; Cubukcu, Suat ; Demir, Fatih ; Akca, Davut**, Framing anti-Americanism in Turkey: An empirical comparison of domestic and international media, International Journal of Media & Cultural Politics, Vol. 16, No. 2, 1 June 2020, էջ 139-157:

խանական էլիտայի հակաամերիկանիզմի նարատիվը՝ ԱՄՆ-ին ներկայացնելով որպես Թուրքիայի հիմնական թշնամի[51], ինչը արտացոլվում է նաև հանրային սոցիարցումներում: Միջազգային հարաբերությունների պրոֆեսոր Իհսան Դաղըի խոսքով՝ հակաարևեմտականության ԱԶԿ-ական նարատիվի ազդեցությունը հասարակության վրա սահմանափակ կլիներ, եթե այն ստեղծած չլիներ բոլոր հաղորդակցային հարթակները վերահսկող քարոզչական ցանց ու խոսույթային գերիշխանություն[52]: Ինչպես դիպուկ նկատում է ամերիկացի գիտնականներից մեկը, տարիների հարցումները ցույց են տվել Թուրքիայում հակաամերիկանիզմի շարունակական աճ, սակայն առկա է մեկ այլ հանգամանք: Տարիներ առաջ առավելապես թուրքական հակաամերիկանիզմն ուղղված էր ամերիկյան կառավարության քաղաքականության դեմ, սակայն այսօր ականատես ենք լինում ամերիկյան ժողովրդի դեմ ինտենսիվ ատելության[53]: «Pew Research Center» հետազոտական ընկերության 2017թ. հարցումների համաձայն՝ Թուրքիայում հարցվածների 67 %-ը բացասական է վերաբերվել ամերիկացիների նկատմամբ, իսկ 82 %-ը հավանություն չի տվել երկրում ամերիկյան արժեքների ու սովորույթների տարածմանը, ինչն ամենաբարձր ցուցանիշն է եղել այլ երկրների համեմատ[54]: 2019 թ. թուրքական Քադիր-Հաս համալսարանի անցկացրած սոցիոլոգիական հարցումների համաձայն՝ հարցվածների 81.3 %-ը ԱՄՆ-ին համարել էր որպես անվտանգության թիվ մեկ սպառնալիք երկիր, ինչը ռեկորդային ցուցանիշ է: 2018 թ. հարցումներով այդ ցուցանիշն աճել էր ավելի քան 27 %-ով: Համեմատության համար նշենք, որ 2015 թ. ցուցանիշը կազմել էր 35 %: ԱՄՆ-ն որպես բարեկամ երկիր էր նշել հարցվածների միայն 5.4 %-ը[55]: 2020 թ. հարցումներով թեև ԱՄՆ-ին թիվ մեկ սպառնալիք երկիր համարողների ցուցանիշը փոքր-ինչ նվազել էր, այդուհանդերձ, կրկին ցուցակում զբաղեցնում էր առաջին հորիզոնականը[56]: Մեկ այլ՝ «Areda» կազմակերպության կողմից 2021թ. իրականացված հասարակական կարծիքի ուսումնասիրության համաձայն՝ հարցվածների մոտ 93%-ը ԱՄՆ-ին չէր համարել որպես «Թուրքիայի ռազմավարական գործընկեր և դաշնա-

---

[51] Տե՛ս **Ibrahim Karagül**, ABD Türkiye için düşman ülkedir. Bir gün, binlerce insan İncirlik'i de kuşatır.., Yeni Şafak, 26 Ocak, 2018, https://www.yenisafak.com/yazarlar/ibrahim-karagul/abd-turkiye-icin-dusman-ulkedir-bir-gun-binlerce-insan-incirliki-de-kusatir-2043139:

[52] Տե՛ս **Ihsan Dağı**, Turkey's division between East and West, https://www.ips-journal.eu /topics/democracy-and-society/turkeys-divided-public-between-the-west-and-russia-5886/

[53] Տե՛ս **Pinar Tremblay**, Anti-Americanism reaches new peak in Turkey, Al-Monitor, August 21, 2017, https://www.al-monitor.com/originals/2017/08/turkey-united-states-anti-americanism-reaches -new-highs.html:

[54] Տե՛ս **Richard Wike, Bruce Stokes, Jacob Poushter and Janell Fetterolf**, The tarnished American brand, Pew Research Center Report, June 26, 2017, https://www.pewresearch.org/ global/2017/06/26/tarnished-american-brand/

[55] Türk Dış Politikası Kamuoyu Algıları Araştırması, 4 Temmuz 2019, https://www.khas.edu.tr/sites/khas.edu.tr/files/inline-files/CTRS-TDP-2019.pdf

[56] Türk Dış Politikası Kamuoyu Algıları Araştırması, 17 Haziran 2020, https://www.khas.edu.tr/sites/khas.edu.tr/files/inline-files/DPA2020_BASIN%5B1%5D_0.pdf

կից»[57]: Թեև նման բարձր ցուցանիշն ընկերությունը բացատրել էր ԱՄՆ նախագահի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հանգամանքով, սակայն ակնհայտ է, որ թուրքական հակաամերիկանիզմն ավելի խորը արմատներ ունի: Ըստ նույն ընկերության փոքր ինչ ուշ անցկացրած հարցումների՝ մասնակիցների շուրջ 53%-ը Թուրքիայի անմիջական հարևանությամբ ԱՄՆ-ի գործողությունները համարել էր առաջիկա 10 տարիներին Թուրքիայի առջև ծառացող ամենակարևոր արտաքին քաղաքական խնդիրը և կրկին ԱՄՆ-ն տեղ էր գտել առաջին հորիզոնականում՝ որպես Թուրքիային սպառնալիք ներկայացնող երկիր[58]:

Դաղրն, վկայակոչելով Թուրքիայում 2022 թ. սկզբներին անցկացված սոցհարցումների տվյալները, նկատում է, որ շարքային թուրքերն արտաքին քաղաքականության հարցում ավելի մեծ առաջնահերթություն են տալիս Ռուսաստանի և Չինաստանի հետ հարաբերություններին, քան ԱՄՆ-ին ու ԵՄ-ին, և այդ պատկերը չի փոխվել անգամ ռուս-ուկրաինական պատերամից հետո[59]: Ըստ նրա՝ դա վկայում է թուրքական հասարակության շրջանում խորը արմատավորված հակաարևմտականությունը, ինչը զարգացել է հատկապես իշխող ԱԶԿ-ի կառավարման ընթացքում, և դա երկարաժամկետ էֆեկտ է ունենալու նույնիսկ հետէրդողանական շրջանում[60]: Թաշփընարը նկատում է, որ թուրքական հակաամերիկանիզմն ավելի շատ կապված է Թուրքիայում ինքնության խնդիրների, քան ամերիկյան արտաքին քաղաքականության հետ, ինչպես օրինակ՝ քրդական հարցի ու իսլամի պարագայում: Սեփական ինքնության խնդիրների լուծման հարցում անկարող պոպուլիստական իշխանություններն իրենց անհաջողությունները հաճախ վերագրում են ԱՄՆ-ին և այլ ուժերի՝ խթանելով դավադրական տեսություններն ու զարգացնելով հակաամերիկանիզմը[61]: Ա. Քալիբերը և Է. Քալիբերը, Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության միտումները գնահատելով ներպետական գործոնների՝ էլիտայի պոպուլիզմի ու պետության ինքնության փոխակերպումների դիրքերից, նշում են, որ Թուրքիայում ուժգնացող հակաարևմտականությունը և արտաքին ու ներքին քաղաքականության «ապաեվրոպականացումը» (de-europeanisation) պայմանավորված են երկրի ներքին գործընթացներով, էլիտայի ընկալումներով ու ինքնությամբ[62]:

Հակաամերիկանիզմը և հակաարևմտականությունն ընդհանրապես Էրդողանի աշխարհաքաղաքական ռազմավարությանը ծառայող կարևոր ու արդյունավետ գործիք են: Դրանց տարածմամբ հնարավո-

---

[57] Dikkat çeken anket: ABD Türkiye'nin dostu değildir, https://www.areda.com/dikkat-ceken-anket-%e2%80%8babd-turkiyenin-dostu-degildir%e2%80%8b/

[58] ABD Türkiye'nin önündeki en büyük tehlike, Ortadoğu, 07 Haziran, 2021, https://www.ortadogugazetesi.com/gundem/abd-turkiye-nin-onundeki-en-buyuk-tehlike-h39573.html

[59] Տե՛ս **Ihsan Dağı**, նշվ. աշխ.:

[60] Տե՛ս նույն տեղը:

[61] Տե՛ս **O. Taşpınar**, "What fuels anti-Americanism in Turkey?", Ahval, December 11, 2017, https://ahvalnews.com/us-turkey/what-fuels-anti-americanism-turkey:

[62] Տե՛ս **A. Kaliber, E. Kaliber**, նշվ. աշխ., էջ 1-16:

րություն է ստեղծվում հիմնավորել Թուրքիայի ոչ միայն աշխարհաքաղաքական այլընտրանքի անհրաժեշտությունը, այլև իսլամական քաղաքակրթական արեալում թուրքական հավակնությունների հեռանկարայնությունն ու հիմնավորվածությունը: Այս համատեքստում Թուրքիան փորձում է դիրքավորվել և սեփական միջազգային իմիջը կերտել հակաիմպերիալիզմի և դրա դիմադրության առաջին շարքում կանգնածի կեցվածքով, և նրա թիրախում հայտնվել էր Արևմուտքն ընդհանրապես և ԱՄՆ-ն մասնավորապես: Մի կողմից՝ ԱՄՆ-ի թշնամական իմիջի գեներացումը թուրքական պահպանողական հասարակությունը մոբիլիզացնելու և կառավարելու, մյուս կողմից էլ՝ իսլամական աշխարհում Արևմուտքի ու ԱՄՆ-ի դեմ անկոտրում պայքարող ու ընդվզող իսլամական առաջնորդի կերպար կերտելու համար տարվող այս քաղաքականությունը ծառայում էր նեո-օսմանյան ու իսլամական արտաքին քաղաքականության օրակարգերի սպասարկմանը:

ЛЕВОН ОВСЕПЯН – ***Влияние внутритурецких общественно-политических факторов на турецко-американские отношения: подпитка заговора и антиамериканизма.*** - Помимо международных структурных факторов, переменные на внутреннем уровне Турции и социально-политические процессы также важны для трансформации внешней политики Турции. В статье рассматривается нынешний беспрецедентный кризис в турецко-американских отношениях в контексте турецких общественно-политических процессов. В общей тенденции секьюритизации турецкой внешней политики развиваются антизападничество и антиамериканизм в Турции, что является результатом дискурсивной гегемонии правящей ПСР. С одной стороны, антиамериканизм и демонизация имиджа США дает Эрдогану полезный инструмент для мобилизации поддержки консерваторов и националистов в стране. С другой стороны, он пытается навязать образ Турции в международной сфере как напористой силы сопротивления западной гегемонии в исламском мире.

Ключевые слова: *турецко-американские отношения, Партия справедливости и развития, Эрдоган, попытка военного переворота, антиамериканизм*

LEVON HOVSEPYAN – ***The Impact of Turkey's domestic social-political factors on Turkish-US relations: Feeding conspiracy and anti-Americanism.*** – Besides international structural factors, Turkish domestic level variables and socio-political processes are also essential for Turkish foreign policy transformation. The article considers current unprecedented crisis in Turkish-US relations in the context of Turkish social-political processes. In the general trend of securitization of Turkish foreign policy anti-Westernism and anti-Americanism in Turkey are in progress, which is the outcome of discursive hegemony of the ruling AKP. On the one hand, anti-Americanism and the demonization of USA's image gives Erdogan a useful tool in conservative, nationalist support mobilization in the country. On the other hand, he tries to impose Turkey's image in the international realm as an assertive power of resistance against the Western hegemony in the Islamic world.

Key words: *Turkish-American relations, Justice and development party, Erdogan, military coup attempt, anti-Americanism*